

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐԲԻԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ 2013
ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

Հարգելի համագյուղացիներ և հյուրեր, թույլ տվեք ձեր ուշադրությանը ներկայացնել 2013 թվականի 1-ին կիսամյակում գյուղապետարանի աշխատակազմի, իմ և ավագանու կողմից կատարված աշխատանքները :

Նախապես ցանկանում եմ ձեզ տեղեկացնել, որ համայնքի բնակչության թիվը կազմում է 1830, տնտեսությունների թիվը՝ 307:

2013 թվականի 1-ին կիսամյակում Ջրարբիի գյուղական համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին կատարել է մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել նպաստելու համայնքի բնակչության բարեկեցության ապահովմանը և համայնքի ներդաշնակ զարգացմանը և այդ աշխատանքների մասին ամբողջական և հավաստի տեղեկատվություն է տրամադրվել համայնքի բնակիչներին:

Գյուղապետարանի աշխատանքները 1-ին կիսամյակում եղել է առավել բաց, թափանցիկ բնակիչները հնարավորություն են ունեցել սպառիչ տեղեկանալ գյուղապետարանի գործունեության մանրամասներին:

Համայնքում գործում է մանկապարտեզ, հաճախում են 52 երեխա: Տարեսկզբին հաստատված 6798300/ վեց միլիոն յոթ հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր/ դրամից՝ նախահաշվի համաձայն համայնքի բյուջեից որպես ընթացիկ անհատույց վճարներ՝ սուբսիդիան «Ջրարբի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 1-ին կիսամյակում հատկացվել և ամբողջությամբ փոխանցվել է 3358300/ երեք միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր/ դրամ գումար: Մանկապարտեզի աշխատանքները պարբերաբար վերահսկվում են գյուղապետարանի կողմից: Գյուղապետարանը հնարավորինս աշխատում է հոգալ մանկապարտեզի խնդիրները:

Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրը կազմակերպվեց երկու ժամյա միջոցառում, հինգ հեքիաթի հերոսների մասնակցությամբ, որի համար փոխանցվել է 51000/ հիսուներեք հազար/ դրամ:

2013 թվականի 1-ին կիսամյակում համայնքի ավագանու որոշմամբ համայնքում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, 1-ին միջոցառումը, որի ընդհանուր գումարը կազմում էր 600000/վեց

հարյուր հազար/ դրամ, գյուղապետարանը կազմակերպեց Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ին կապակցությամբ:

Միջոցառման ժամանակ համայնքի թվով 67 կին թոշակառուներից յուրաքանչյուրին տրամադրեց 5200 / հինգ հազար երկու հարյուր/ դրամ արժողության նվերներ: Նույն օրը՝ միջոցառման ժամանակ գյուղապետարանը համայնքի միջնակարգ դպրոցի անձնակազմի թվով 23 կին աշխատողներին և մանկապարտեզի թվով 11 կին աշխատակիցներին նույաես նվիրեց 5200 / հինգ հազար երկու հարյուր / դրամ արժողությամբ նվերներ: Տոնի առթիվ նվերներ տրամադրվեց նաև համայնքում միակ կին ազատամարտիկին և միակ կին ավագանու անդամին, բուժկետի 2 աշխատակիցներին նույնպես 5200/հինգ հազար երկու հարյուր/ դրամ արժողությամբ նվերներ::

2-րդ միջոցառումը կազմակերպվեց Հաղթանակի և խաղաղության տոնի՝ Մայիսի 9-ի կապակցությամբ: Միջոցառմանը հրավիրված էին Ղարաբաղյան պատերազմին մասնակցած համայնքի ազատամարտիկները:

Միջոցառման կազմակերպման համար համայնքի բյուջեից հատկացվեց 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար:

Միջոցառում կազմակերպվեց նաև Վերջին զանգի կապակցությամբ: Համայնքի թվով 7 շրջանավարտներից յուրաքանչյուրին գյուղապետարանը նվիրեց 14286 /տասնչորս հազար երկու հարյուր ութսունվեց/ դրամ արժողությամբ նվերներ, որի ընդհանուր գումարը կազմեց 100000/ մեկ հարյուր հազար/ դրամ:

1-ին կիսամյակում գյուղապետարանը 149000 / մեկ հարյուր քառասունինը հազար/ դրամ հատկացրեց համայնքի միջնակարգ դպրոցի բոլոր դասարաններին պատմամշակույթային օջախներ տանելու և էքսկուրսյաներ կազմակերպելու համար:

2013 թվականին 50000 / հիսուն հազար/ դրամ հատկացվեց գյուղապետարանին պատկանող ՎԱԶ2106 մակնիշի ավտոմեքենան գազով լիցքավորելու համար:

Համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության համար տարեկան 900000 /ինը հարյուր հազար/ դրամի պայմանագիր է կնքվել Ջրարբի համայնքի բնակիչ Ս.Բաղդասարյանի հետ, ըստ որի համայնքում յուրաքանչյուր շաբաթ, շաբաթական երկու անգամ, իրականացվում է աղբահանման աշխատանքներ, որի արդյունքում մաքրվել են համայնքի փողոցներն ու մայթերը: Աղբահանման աշխատանքների դիմաց վարձատրությունն անբողջությամբ

կատարվում է գյուղապետարանի միջոցներով: 2013թվականի 1-ին կիսամյակում աղբահանման աշխատանքների դիմաց վճարվել է 323980 երեք հարյուր քսաներեք հազար ինը հարյուր ութսուն/ դրամ գումար:

2013 թվականին աշխատանքներ են տարվել նաև խմելու ջրի ուղղությամբ: Համայնքում 2008 թվականին հորատված խմելու ջրի խորքային հորը այս տարի արդեն ինքնաբուխ չէր հոսում: Ոսումնասիրվեց խնդիրը և պարզվեց, որ Հ.Թումանյան փողոցի սկզբնամասի 80 տնտեսություն խմելու ջուր չունի: Ավագանու որոշմամբ 120000 / մեկ հարյուր քսան հազար/ դրամ արժողությամբ ձեռք բերվեց 2 /երկու/ էլեկտրական պոմպ և տեղադրվեց համայնքի Հ.Թումանյան փողոցի սկզբնամասի խորքային հորի վրա:

1-ին կիսամյակում համայնքի թվով 12 ընտանիքների իրենց դիմումների համաձայն տրամադրվել է սոցիալական օգնություն՝ ընդամենը 290000 / երկու հարյուր ինսուն հազար/ դրամ:

2009 թվականից համայնքում ձևավորվել է մի ավանդույթ, ըստ որի հարազատին կորցրած ընտանիքներին տրամադրվում է 50000/ հիսուն հազար/ դրամ օգնություն, 2013 թվականի 1-ին կիսամյակում հարազատին կորցրած 4/չորս/ ընտանիքի տրամադրվել է 200000 /երկու հարյուր հազար / դրամ օգնություն:

2013թվականի 1-ին կիսամյակում համայնքի բյուջեից ևս 1 ընտանիքի հատկացվել է ֆինանսական աջակցություն 28000 / քսանութ հազար/դրամի չափով << Հայաստանի ԴՕՍԱԱՖ >> ՀԿ-ի << Էջմիածնի ավտոդպրոց >> ՍՊԸ -ում սովորելու ճանապարհաձախսը ապահովելու համար:

2013թվականի 1-ին կիսամյակում բնակիչների պահանջով գրվել է 282 տեղեկանք:

2013 թվականի 1-ին կիսամյակում տեղի է ունեցել 7 ավագանու նիստ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերող տարաբնույթ հարցեր, ինչպես նաև սոցիալական ապահովության կարիք ունեցող բնակիչների դիմումները:

2013 թվականի 1-ին կիսամյակում համայնքում կայացավ հողի ուղղակի վաճառք, 0,36հա, որի արդյունքում համայնքի բյուջե է մուտքագրվել 22200 /քսաներկու հազար երկու հարյուր / դրամ եկամուտ:

2013 թվականի Ջրարբի համայնքի բյուջեով հաստատվել է 27638300 / քսանյոթ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար երեք հարյուր / դրամի եկամուտ, մուտքագրվել է 14180207 / տասնչորս միլիոն հարյուր

ութսուն հազար երկու հարյուր յոթ / դրամ, որը կազմում է ընդհանուր բյուջեի 51.30 %-ը:

Պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և մուտքագրված գույքահարկի, հողի հարկի, այլ ոչ հարկային եկամուտների, վարձակալական հողի հարկի և տեղական տուրքերի գանձման արդյունքում մուտքագրվել են հետևյալ եկամուտները՝

Գույքահարկ շենքերի և շինությունների և փոխադրամիջոցների համար նախատեսվել է 3036500/երեք միլիոն երեսունվեց հազար հինգ հարյուր/ դրամ, հավաքագրվել է 2081046/երկու միլիոն ութսունմեկ հազար քառասունվեց/ դրամ, որը կազմում է 68.53%

Գյուղ. նշ. հողերից հողի հարկի համար նախատեսվել է 2325000/երկու միլիոն երեք հարյուրքսանհինգ/ դրամ, հավաքագրվել է 1120521/մեկ միլիոն հարյուր քսան հազար հինգ հարյուր քսանմեկ քառասունվեց/ դրամ, որը կազմում է 48.19%

Վարձակալական հողի հարկի համար նախատեսվել է 210000/երկու հարյուր տաս հազար/ դրամ, հավաքագրվել է 82740/ութսուներկու հազար յոթ հարյուր քառասուն/ դրամ, որը կազմում է 39.40%

Տեղական տուրքի համար նախատեսվել է 210000/երկու հարյուր տաս հազար/ դրամ, հավաքագրվել է 82740/ութսուներկու հազար յոթ հարյուր քառասուն/ դրամ, որը կազմում է 15.00%

Տեղական վճարի համար, որպես աղբահանության գումար նախատեսվել է 100.0 հազ.դրամ, սակայն 1-ին կիսամյակում չի հավաքագրվել:

Դոտացիան տրամադրվելու է 21716800/ քսանմեկ միլիոն յոթ հարյուր տասնվեց հազար ութ հարյուր/ դրամ, հատկացվել է 10858400/ տաս միլիոն ութ հարյուր հիսունութ չորս հարյուր/ դրամ, որը կազմում է 50.00%

2013 թվականի 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝

Աշխատավարձի համար ծախսվել է 4915328 / չորս միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր քսանութ/ դրամ

Էլեկտրաէներգիայի համար ծախսվել է 144500 / մեկ հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր/ դրամ,

Կապի ծառայությունների համար ծախսվել է 68000 վաթսուներութ հազար/ դրամ:

Ներքին գործուղման համար ծախսվել է 36000/ երեսունվեց հազար / դրամ

Համակարգչային ծառայությունների համար ծախսվել է 269200/ երկու հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր / դրամ

Ներկայացուցչական ծախսերի համար ծախսվել է 646000/ վեց հարյուր քառասունվեց հազար / դրամ

Ընդհանուր ծառայությունների համար ծախսվել է 175000/ մեկ հարյուր յոթանասունհինգ հազար / դրամ

Մասնագիտական ծառայությունների համար ծախսվել է 322400/ երեք հարյուր քսաներկու հազար չորս հարյուր / դրամ

Գրասենյակային նյութերի համար ծախսվել է 181420/ մեկ հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր քսան/ դրամ

Տրանսպորտային նյութերի համար ծախսվել է 50000/ հիսուն հազար / դրամ

Կենցաղային և հանրային սննդի համար ծախսվել է 15085/ տասնհինգ հազար ութսունհինգ / դրամ

Պարտադիր վճարների համար ծախսվել է 2000/ երկու հազար / դրամ

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումների համար ծախսվել է 120000/ մեկ հարյուր քսան հազար / դրամ

Վարչական սարքավորումների համար ծախսվել է 19500/տասնինը հազար հինգ հարյուր/ դրամ

Ջրարբի համայնքում առկա ծախսատար խնդիրները հետևյալն են՝

- 1 Սշակույթի տան վերանորոգում.
- 2 Համայնքի փողոցների ասֆալտապատում
3. Համայնքի դպրոցի շենքի վերանորոգում

Ջրարբի համայնքի ղեկավար՝



(Handwritten signature)

Ղ.Ղազարյան

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 15-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Համայնքի անդամների ընդհանուր ժողովը կայացավ 2013 թվականի հուլիսի 15-ին ժամը 14:00-ին և տևեց մինչև 15:00-ին: Ժողովը կայացավ գյուղապետարանի շենքում: Ժողովին մասնակցում էր ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի պետ Սանասար Բաղդասարյանը:

Համայնքում մասնակցում են համայնքի 25 բնակիչ:

Ժողովը նախագահում է համայնքի ղեկավար Ղ.Ղազարյանը քարտուղարությամբ՝ Վ. Վարդանյանի:

Օրկարգ- Ջրարքի գյուղապետի 2013 թվականի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների մասին:

(Ձեկուցող՝ համայնքի ղեկավար Ղ.Ղազարյան)

Ելույթ ունեցան ժողովի 3 մասնակիցներ և ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Ս.Բաղդասարյանը: Ձեկուցման մեջ և ելույթ ունեցողները մատնանշեցին համայնքի բնակչությանը հուզող հետևյալ հիմնախնդիրները

1. Դպրոցի շենքի վերանորոգում,
2. Մշակույթի տունը վերանորոգման կարիք ունի,
3. Գյուղամիջյան ճանապարհները ասֆալտապատելու կարիք ունի: Իսկականի հետ ճիշտ է:

Ջրարքի համայնքի ղեկավար՝



Ղ.Ղազարյան